ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի հոկտեմբերի 13-ի, ժամը 14:00-ի նիստի
N 2 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» 01.09.2022, N 144) **բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Նարինե Հայկի Խալաթյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցողներ՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողները նշեցին. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 144 համարում հայտարարվել է մրցույթ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի** թափուր պաշտոնի համար, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 28-ին ռեկտորին դիմում է ներկայացրել բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Նարինե Հայկի Խալաթյանը**: Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության

ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Ն.Հ.Խալաթյանը ծնվել է 1971 թվականի հուլիսի 13-ին Երևանում: 1989-1994 թթ. սովորել և գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ((ԵրԺՏԻ), ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)) լրիվ դասընթացը «Աշխատանքի էկոնոմիկա և սոցիոլոգիա» մասնագիտությամբ՝ ստանալով տնտեսագետի որակավորում: 1994 թվականին ընդունվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի արտադրությունից կտրված ասպիրանտուրա «Քաղաքատնտեսություն» մասնագիտությամբ և 1997 թվականին ազատվել է ասպիրանտուրայից ժամկետը լրանալու կապակցությամբ: 2012-2014 թթ. սովորել և գերազանցության դիպլոմով ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մագիստրատուրան «Աշխատանքային իրավունք» մասնագիտությամբ և նրան շնորհվել է տնտեսագիտության-իրավաբանության մագիստրոսի աստիճան:

Ն.Հ.Խալաթյանը 2008 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2009 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Տվյալ բնագավառում նա ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 19 է (3 մեթոդական ցուցումներ, 3 դասընթացի ծրագիր, 13 գիտական հոդված):

Աշխատանքային գործունեությունը: Ն.Հ.Խալաթյանը 1998 թվականի փետրվարի 16-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. նախ՝ 16.02.1998 - 01.09.2012՝ տնտեսագիտության տեսության ամբիոնում՝ ասիստենտ (այդ թվում 23.12.2000 - 01.09.2001՝ դասախոս), իսկ 2012 թվականի սեպտեմբերի 1-ից՝ դոցենտ: Ն.Հ.Խալաթյանը 2022 թվականի սեպտեմբերի 1-ին նշանակվել է բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար: Զեկուցողը նշեց նաև, որ Ն.Հ.Խալաթյանը 03.07.1988 - 28.09.1989 աշխատել է ընդհանուր սպառման ապրանքների «Ստելլա» կոոպերատիվում որպես հաշվետար, 1995-1998 թթ. ժամավճարային կարգով դասավանդել է տնտեսագիտության տեսության ամբիոնում (ասիստենտ), 1997-2000 թթ.՝ Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի «Ալեք Մանուկյան» հենակետային վարժարանում (դասախոս), 1999-2002 թթ.՝ «Վարդանանց» համալսարանում (դասախոս), 1999-2001 թթ.՝ «Անանիա Շիրակացի» համալսարանում (դասախոս): 1998 դեկտեմբերից մինչև 1999 թվականի դեկտեմբերի 30-ը եղել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի օգնական (0,5

դրույքով), Համաշխարհային բանկի «Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների» ծրագրի աշխատող (26.11.2016), Համաշխարհային բանկի «Կարգավորման ոլորտում տեսուչներից պահանջվող հիմնական հմտություններ» պիլոտային վերապատրաստման դասընթացի դասախոս-վերապատրաստող քաղաքացիական ծառայության տեսուչների 2 խմբերում (28.11.2016 - 01.12.2016), «Երևանի մենեջմենթի համալսարան» հավատարմագրված ոչ առևտրային կազմակերպության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ:

Ն.Հ.Խալաթյանը վարում է հետևյալ դասընթացները՝ «Տնտեսագիտության տեսություն», «Միկրոտնտեսական ներածություն», «Մակրոտնտեսական ներածություն», «Ինստիտուցիոնալ տնտեսագիտություն», «Տնտեսական մտքի պատմություն», «Տնտեսական ուսմունքների պատմություն», «Անցումային տնտեսագիտություն», «Գլոբալ տնտեսության հիմնախնդիրները», «Հակամենաշնորհային քաղաքականություն», «Տնտեսական ճգնաժամերի տեսություններ», «Մոնետարիզմ», «Նոր դասական տնտեսագիտություն», «Ճյուղային շուկաների տեսություն և մրցակցային գաղափարներ», «Տնտեսական պարբերաշրջանների տեսություններ», «Հարկաբյուջետային քաղաքականության տեսական հիմնախնդիրները»: Վերջին 10 տարվա ընթացքում նա մասնակցել է մի շարք վերապատրաստման դասընթացների, միջազգային գիտաժողովների, սեմինարների և համաժողովների՝ ստանալով հավաստագրեր (ընդհանուր թիվը՝ 13):

Տիրապետում է ռուսերենին (լավ), ֆրանսերենին (լավ) և անգլերենին (1-ին մակարդակ):

Ամուսնացած է, ունի երեք դուստր:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի նիստում (արձանագրություն N 2) քննարկվել է բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Ն.Հ.Խալաթյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Նիստը նախագահել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը: Ն.Հ.Խալաթյանը ներկայացրել է բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ այն պետք է համահունչ լինի համալսարանի զարգացման տեսլականին: Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքներով ելույթ են

ունեցել դոցենտներ Ա.Պ.Գևորգյանը, Հ.Ռ.Հակոբյանը: Նրանք նշել են, որ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են սահմանված պահանջներին, նա վայելում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հարգանքը և օժտված է ղեկավարին հատուկ հմտություններով: Ելույթներից հետո ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ամբիոնի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1) բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնը երաշխավորել է Ն.Հ.Խալաթյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ի նիստում (արձանագրություն N 12), որտեղ բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1: Ձեռնպահ էր Լ.Ն.Մեհրաբյանը) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Նարինե Հայկի Խալաթյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Զեկուցողներից հետո Նարինե Հայկի Խալաթյանը ներկայացրեց բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Նարինե Հայկի Խալաթյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 58-ը. կողմ՝ 57, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Քվեարկության պահին դահլիճում չէր Մ.Ս.Մելքումյանը):

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի 35-րդ կետը, բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 1 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 56, դեմ՝ 2, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Նարինե Հայկի Խալաթյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2022 թ. հոկտեմբերի 13
Երևան